

• 1623

2. VIII

7



ԼՐՈՒՄ

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹԻՒՄՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԺՊՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԴԱՅ

ԽՐԱԿԻՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՈՒ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԳՐՈՒՄ

ՅՈՒՆԻՍԿ 1858 • ԹԻՒ 1 •

ՎԱՆՏՈՄԳ

Ի ՏԳՐԱԿՆԷ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՈՅՆ

ԴՎԱՐԱԳ

ԱՆՁՆԱՆՈՒԻՐ ԳՈՐԾԱՎԱԼՔ.

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ , Մկրտիչ Տ . Առմեան 'ի գրանոցի վասպուրական
Արծուոյն :

ԿԱՐԻՆ , Խաչատուր Խան Տ , 'Ներսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ , Մ , Ղարիպճան Աղա Մ , Շողիկեանց .


ՏՐԱՊԷԶՈՆ , Մկրտչան Աղա Յովհաննիսեան .

ՊՕԼԻՍ , Պ , Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալթայ Խան .

ԶՄԻԻՌԻՆ , Պ , Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցոյ .

ԲԵՐԻԱ , Յովհաննէս Աղա Միսաբեան :

ՍԱԼԱՄԱՍՏ , Յակովբ Միքայելեան Մէլիք Յակովբեանց . մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :



ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ի վան , 'ի Կարին , 'ի Մուշ , 'ի Բաղէշ , 'ի Տրապիզոն 2 Օսման-
ցի քսան ղուրուշանոց արծաթ Մէճիտիէ ու կէսը :

Ի Պօլիս , 'ի Զմիւռն , 'ի Բերիա , երեք արծաթ քսան
ղուրուշանոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան , այսինքն 'ի Տփլիս , յԱ-
ղէքսանդրպօլ , 'ի Դավլէժ եւ այլն , չորս արծաթ Մանէթ :

Զին միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ :

ՆԱԽԱԲԱՆ

ԱՌԻԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՐԾՈՒՈՅՆ

Փափագելի էր յոյժ Վասպուրական Արծուոյն, եթէ յետ նուիրելոյ զանդրանիկ երակայրի իւր՝ անգէն առ նմին ըստ խոստման իւրոյ սկիզբն առնէր յԱյրիւ ամուսն ընծայել ցարդ Հոյաղն բանասիրաց ՚ի հայրենահամ պաղտն : Այլ աւանդ, այն ինչ գէտ երակայրիքն ՚ի բերանն ճաշարդացն կային, վաղվազակի դառնութիւն ՚ի լերոյ հասա, զի՛նչ, աշունն տարածամ եհաս յերկիրն Վասպուրական եւ յանկարծ ուժգնակի հարեալ ՚ի ծառն Արծուոյն, տեբեւթափ պողակորդս կայոյց զայն ՚ի խան վայրիկնի, որով դո՛ք թէ դառնացան քիւր զերակայրի ճաշարդացն եւ մինչեւ ցարդ զգան Հոյաղն Ազգասէրք զնոյն դառնութեան համա : Այս իսկ են սքանչելիք մեծ երեւեալ ՚ի Վասպուրական աշխարհա, քանզի դարունն աւետաւոր տարածամ եհաս այսր եւ զԱյրիւն փոխանորդաց ձիւնային եւ ցրտաբեր Յունուարն, յորում տեբեւթափ տունի Արծուոյն՝ ունի հրաշխք իմն կրկին կանանչանալ, բերել աւտիկ զիւր մշտնաւեր հայրենասիրական պատւոն եւ այսպէս՝ ընծայել ՚ի դիպող ժամու թորգումսեր մանկուոյն, որոց աչք տպանն անձխնօք եւ կարտաութեամբ քաղցեալ են քիւր նոյն ՚ի ճաշարդն հայրենաբեր պաղտն : Ուստի ժաեմք, զի ներդաժկա լինիք առ մեզ, կաճաւք ուսումնասիրաց, փոխանակ զի յապագեցաք այսչափ եւ իսկաւ դառարեցան թախք Արծուոյն ՚ի հայրենի երկրէ աստի : Յուսամք Տեառն յաջորդութեամբ, զի այսուհետեւ աւտեւել եւս զոհ սրապուք զընթերցողս նոր եղանակաւ ՚ի կարգի զնելով զընթացս ամաղլոյս եւ ըստ ինդրելոյ բազմաց փոքրըկացեանել զլիրս քանակութեան՝ կրկնապատկելով զթերթն, որով դիւրանիկ լիցի այնպիսի, որոց քաղցր է՝ զԱրծիւն ՚ի ձեռս ՚ի ծոցի եւ ՚ի սիրտս կրել հայրենաստեանիկ ոգւով :

Գեղեցիկ եւ յորմարագոյն թուեցան մեզ դատարարութիւնք նիւթոց հանձնաւոր խմբադրաց ՄԱՍԵԱՅ ԱՂԱԻՆԵՏՆ, ուստի հաւանիք թէ ոչ շիւտնր մանութեամբ գեթ ըստ մասին զնոյն դատարարութեամբ դատաւորել զյօդուածս այլազան նիւթոց Վասպուրական Արծուոյն, զոր կործեմ հաճելի երեւեսցի բանագէտ ուսումնասիրաց ազգիս :

Չառաժին եւ նախապատիւ քան զամենայն յօդուածս զնեմք ՀԱՆԻՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ առ որով պարունակելոց են սր ինչ առձմարիս կրօն Աստուածապաշտութեան, որ առ հաւատս եւ առ եկեղեցին քրիստոսի վերաբերի եւ ըզձլտի առնել այսու զքաղցրութիւն բանիցն Աստուծոյ ՚ի քիւն հայկածին մանկուոյն քան զմեղք քաղաքական եւ ազգասիրական բանից, որում փափող էր Գալթիւ Երգելով « Որսէն զի քաղցր են ՚ի բիւն իմ բանք քո քան զմեղք բերանիս իմոյ » :

Ջերրորդն՝ առ ամէն յարեմք ՀԱՆՈՒՍԱՐԱՆ ԶԱՅՐԵՆԱՇԱՆ ԱՌԱՔԻՆԱՅ
ՀԱՅՈՑ. ԸՆԴ. որով կարգաւ յիշատակելոյ են գովուծեամբ հանդերձ նախնի
յոթագուէքն մեր, եւ այնպիկ որք հետեւողք դառնին յարդի ժամանակս
նոցին հայրենազարդ գործոց, ըստ սկէնայն հանգամանաց ճառագրելով :

Ջերրորդն՝ իբրեւ դարձի ամին ճահողալիս դաւեմք, ՏԵՍԱՐԱՆՔ ԶԱՅՐԵՆ
ԱՇԽԱՐՀԱՅ. յորում իբրեւ իպտակերին շմարելոց են հին եւ արդի վիճակէ քաղա-
քաց, Գիւղից, Գերդաստանաց, վանօրէից, միշտատանաց, եկեղեցեաց, ժողո-
վոցոց եւ համօրին այլ հանգամանաց. որ առ աշխարհադրական տեղեկութիւնս
վերաբերին : Այլ ցաւիք աստ յոյժ. զի չեմք ձեռնհաս իբրեւ՝ զգեղալածոյձ
Աղաւին Մտեաց. վայելչատեօ պատկերօք զարդարել զանփառուակ աղքատիկ
Թեւս Արծուոյն մերոյ. Բողէս նա զԱղաւոյն : Առ այս Թոյ ներեացեն արդ-
հայկազուն բանասերք, մինչեւ ժամանակն եւ բաղդն յաջողեացն Արծուոյն.
միայն բաւականալին այժմիկ երեւակայութեամբ աչաց զբօնուել ի տխուր տե-
սարանս հայրենի բնականուէր աշխարհին մերոյ :

Ջերրորդն՝ շարակարգեմք յետ սորին, ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻ-
ՆՈՒԹԻՆԱՅ. որք իբրեւ զբոսաբանս բաղմազան ծաղիք զարդարալ՝ բուրբոցէ
յինքնեք զանուշահոտութիւն մեծաթեծ առաքինութեամբ. զորոց իւրաքանչիւր
բնական յատկութեանց եւ գեղեցկութեանց սքանչելի նկարագրութեամբ ճա-
ռե ճշգրտաբան իրաւասութեամբ զարմանալի լմաստաւերն թեւաբոս :

Ջինգերրորդն դաւաւորելք զկնիւրից յօդաւածոց, ԹԱՆԳԱՐԱՆ ԶԱՅԱԿԱՆ
ԴՊՐՈՒԹԵԱՆՑ. առ որով բեզմեղակեմք զհնազունիցն եւ արդի հեղինակաց բազ-
մանիւ Թ գրուածս եթէ ընդաբձակ ոճով շարադրեսւքն եւ եթէ խափաբանու-
թեամբ. զորս միանգամ ի ձեռս բերել կարելեմք ի հնագիւր մատենագրութեանց
շրջելով որոնելով յանկիւնս Հայաստան գաւառաց. յորոց Թեղթիկ մի՝ պատ-
ուական է յոյժ հեռաբնակ տարաշխարհիկ զաղթական Հայոց, քան զբաղմամբեր
դաճո ոսկւոյ եւ հազուադիւտ ալանց :

Իսկ եթէ պատահիլի երբեմն այնպիսի նիւթ ինչ, որ ոչ այնչափ վերաբերի առ-
հինգ սեռս յիշեալ յօդաւածոց. զայն եւս սրժան դատեմք ի վերջոյ Թերթին
հրատարակել. որ միանգամ զօտաւարս գոյն բերի ի լեւելիս ընթերցանելուոյն եւ
հասուցանել զմանկտին ի դէմ եղեալ նպատակին մեր, որ ե բարգաւաճանք հայ-
րենեաց մերոց եւ յօտաւար զլմուելիւն կենցաղօգրուութեան Հայկաբերուէր զա-
ւակաց. որոց ի սեր աշակէս կայ ի ճգունս վաստակաւոր Արծիւն. Թեւակո-
ւելով Թոյն յալիս րհէ յաշխարհ. մինչեւ զցրուեալ ուղիւն Հայկոյ հրաւրե-
ւով հանգուսնէ զԱյրարատ առ մեծաշուք հովանեօք Թեղին Մաւեաց. ոյր ի-
գլուխ Էրկնաձեմ հանգչի լատաւայան Նոյեան :

